

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**

**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար **Ավետիս Ավետիսյան**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու **11.01.2019թ.** թիվ 3 որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Դրմաշեն 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է հնգամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված - 1 Համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված - 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

ԻՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից ու դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Դոմաշեն գյուղական համայնքի 2019-2023թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները, նրանց գործունեության բնագավառներում (ոլորաններում), ՀՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները.

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցվածքները և մատուցվող ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2019-2023թթ. հնգամյա զարգացման ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմինը ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀՀԶԾ-ի մշակման չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀՀԶԾ -ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀՀԶԾ-ի հիմնական նպատակները:

ՀՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության, միջազգային և տեղական դոնոր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք չորս տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը,

գործողությունները և միջոցառումները:

ՀՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ) դիտարկելով նախորդ երկու և գալիք չորս տարիների եկամտային ցուցանիշները:

ՀՀԶԾ-ի 5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀՀԶԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀՀԶԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևեր, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն ըստ գալիք չորս տարիների:

ՀՀԶԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման քառամյա ծրագիրն ըստ տարիների:

ՀՀԶԾ-ի եզրափակումում ներկայացվում են համառոտ մոտեցումներ ՀՀԶԾ-ի իրականացման, մշտադիտարկման (մոնիթորինգի), վերահսկման և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման, ՀՀԶԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Դժմաշեն համայնքը գտնվում է մարզկենտրոնից 51 կմ հեռավորության վրա, մայրաքաղաքից՝ 50 կմ, իսկ տարածաշրջանային կենտրոնից /Սևանից/ 12 կմ հեռավորության վրա: Գյուղը վերաբնակեցվել է 1928թ.՝ Մակու քաղաքից գաղթականներով: Դժմաշենի տարածաշրջանում հայտնաբերվել են նոր քարե դարի բնակատեղիներ: Գյուղում գտնվում է 7-րդ դարում խոյացած սուրբ Թադևոս եկեղեցին: Գյուղի հարավ-արևելյան եզրին, Հրազդան գետի ձախ ափին «Խարաբեք» կոչվող տեղանքում (որը նշանակում է «Ավերակներ») պահպանվում են հնադարյան ամրոցի մնացորդներ: Ամրոցի տարածքում կան դամբարաններ և գյուղատեղի: Գյուղի տարածքում պահպանվել են նաև հնագույն բերդի հետքեր:

Ըստ ավանդության, որտեղ վճիտ ու սառնորակ աղբյուր է եղել, սրբավայր են դարձրել: Դրանցից մեկը կոչվում է «Ծառով ձոր»: Ձորում կան մի քանի ուռենի, մի աղբյուր՝ քաղցրահամ ու վճիտ ջրով: Դժմաշենի պատմական հուշարձանների շարքում յուրահատուկ են մի քանի տասնյակ խաչքարերը՝ ամեն մեկը յուրակերպ, նրբահյուս զարդաքանդակներով: Մեզ համար սովորական խաչքարեր են դրանք, սակայն նրանցից յուրաքանչյուրը կարող է ցանկալի ցուցանմուշ լինել աշխարհի ցանկացած թանգարանում: Խաչքարերի շուրջ ստեղծվել են սրբավայրեր. «Թուխ մանուկ» և «Խաչեր» մատուռները, «Թաք խաչը», «Քրչոտ խաչը», «Ձիարաթը», «Ծակ քարը»: Գյուղի նորագույն սրբավայրը «Խաչով աղբյուրն» է:

Դժմաշենի տարածքում է գտնվում «Վոթոյ բուն» քարայրը, որը եղել է հնադարյան բնակատեղի: Դժմաշենի համայնքի հողային տարածքը զբաղեցնում է Փամբակի լեռնաշղթայի հարավային թեքության լանջերի և Հրազդան գետի առանձին հատվածները: Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 4345 հա տարածք, որն ընկած է ծ.մ. 1800-2400մ բարձրության վրա: Տարածքի ռելիեֆը բավականին խաչաձև է: Բնակլիմայական պայմանները բնութագրվում են լեռնատափաստանային գոտու բարեխառն կլիմայով՝ ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

Բնակավայրի տարածքը կազմում է 204.4 հա, որից բնակելի կառուցապատման՝ 156.3 հա: Համայնքի վարչական տարածքը հատում է M-4 միջպետական նշանակության ավտոմայրուղին, համայնքի տարածքով է անցնում Գեղարքունիքի մարզը Կոտայքի մարզին կապող H-29 հանրապետական նշանակության ավտոճանապարհը:

Դժմաշենի տարածքում կան կարմիր, սպիտակ և սև խարամային գոտիներ:

Խմելու ջրով գյուղն ապահովված է 100%-ով, իսկ ոռոգման ջրով՝ 30%-ով:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքն ունի 734 տնտեսություն և 2833 բնակիչ, որից տղամարդ՝ 1514, կին՝ 1319:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. տնային տնտեսությունների (ծխերի) թիվը - 734
2. երեխաներ (0-6տ) - 213
3. դպրոցականներ (7-17տ) - 326
4. 16-62 տարեկաններ - 1954
5. 63-ից բարձր - 292
6. թոշակառուներ - 292
7. հաշմանդամներ - 108
8. աշխատունակներ - 1908
9. գործազուրկներ - բնակչության 15-18 %
10. արցախյան պատերազմի մասնակիցներ - 15
11. արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներ - 2
12. զբաղվածներ - 1717
13. ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ - 54
14. բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներ - 250

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ժողովրդի իշխանություն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի, հինգ տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարը պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքի ավագանին կազմված է 7 անդամից: Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 13 հոգուց: Համայնքապետարանի աշխատակազմի և ենթակառուցվածքների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով:

Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, շենքն ամբողջովին վերանորոգված է, գույքը նորացված է, համալրված է համակարգչային տեխնիկայով:

1.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ՝ հետևյալ կազմով՝

1. նախադպրոցական հիմնարկ /մանկապարտեզ/
2. մշակույթի տուն և գրադարան
3. արարողությունների սրահի շենք
4. ներհամայնքային նշանակության ջրամատակարարման /ոռոգման և խմելու ջրի/ համակարգ
5. նախկին ծխաբուծարանի երկհարկանի վարչական շենք
6. համայնքապետարանի շենք
7. ներհամայնքային փողոցներ և հրապարակներ
8. ներհամայնքային նշանակության ճանապարհներ
9. ներհամայնքային կամուրջներ
10. գերեզմանատներ
11. համայնքապետարանին պատկանող մեքենասարքավորումներ և այլ գույք
12. կաթսայատան շենք
13. էլ. ենթակայանի շենք
14. փողոցային լուսավորության ցանց

Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և գույքային այլ իրավունքներ: Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վիճակի բնութագրումը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույցը	Հասցեն	Կառուցման տարեթիվը	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատականը	Նորոգման /վերականգնման/, փոխարինման կարիքը	Այլ նշումներ
1.	Նախադպրոցական հիմնարկ /մանկապարտեզ/	գ. Դղմաշեն 1 փ., 2 փկղ, 1	1977	1313.5 քմ	Շենքը հիմնա-նորոգված		

2.	Մշակույթի տուն և գրադարան	գ. Դոմաշեն 1փ., 53	1985	1674.64 քմ	Անբավարար, կարիք ունի հիմնանորոգման	հիմնանորոգում	գույքի ձեռքբերում
3.	Արարողությունների սրահի շենք	գ. Դոմաշեն 1փ., 57/1	1984	638.6 քմ	Անբավարար, կարիք ունի հիմնանորոգման	հիմնանորոգում	գույքի ձեռքբերում
4.	Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման /ոռոգման և խմելու ջրի/ համակարգ	գ. Դոմաշեն	2000 ոռոգ.	2.5 կմ	բավարար	վերականգնում	
			1998 խմելու	18 կմ	լավ	-	
5.	Նախկին ծիսաբուժարանի երկհարկանի վարչական շենք	գ. Դոմաշեն 1փ., 93/3	1973	758.64 քմ	ոչ բավարար	վերականգնում	
6.	Համայնքապետարանի շենք	գ. Դոմաշեն 1փ., 30	1978	390 քմ	լավ	-	
7.	Ներհամայնքային փողոցներ և հրապարակներ	գ. Դոմաշեն		25.26 հա	բավարար	նորոգում	
8.	Ներհամայնքային նշանակության ճանապարհներ	գ. Դոմաշեն		17.76 հա	բավարար	նորոգում	
9.	Ներհամայնքային կամուրջներ	գ. Դոմաշեն	1970-ական	8մx30մx10մ	վթարային	վերականգնում	
10.	Գերեզմանատներ	գ. Դոմաշեն 05-030-0058-0002	IX-XVII դ	0.24 հա	փակ		
		գ. Դոմաշեն 05-030-0059-0002	IX-XVII դ	0.89 հա	մասնակի փակ		
		գ. Դոմաշեն 05-030-0070-0001	1971	3.89 հա	բաց	ցանկապատում	
		գ. Դոմաշեն 05-030-0073-0002	XIX դ սկիզբ	1.89 հա	բաց	ցանկապատի վերանորոգում	
		գ. Դոմաշեն 05-030-0062-0016	1960-ական	0.09 հա	մասնակի փակ	ցանկապատում	
11.	Համայնքապետարանին պատկանող մեքենասարքավորումներ և այլ գույք	գ. Դոմաշեն	PAJERO 3.0 2006թ. արտ.		լավ	նորոգում	վառելիքի և պահեստամասերի ձեռքբերում
12.	Կաթսայատան շենք	գ. Դոմաշեն	1985	131 քմ	ապամոնտաժված		Ցանկալի է օտարել
13.	Էլ. ենթակայանի շենք	գ. Դոմաշեն 1փ., 93/2	1975	12.15 քմ	ապամոնտաժված		Ցանկալի է օտարել
14.	Փողոցային լուսավորության ցանց	գ. Դոմաշեն	2006 -	6160 մ	լավ		Կարիք ունի ընդարձակման

Մանկապարտեզի շենքը կառուցվել է 1977 թվականին: 1996-2017թ.թ. մանկապարտեզը չի գործել՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Երկար տարիներ չշահագործելու հետևանքով ամբողջովին շարքից դուրս էր եկել շենքի տանիքը, անձրևաջրերի ներս թափանցման հետևանքով շարքից դուրս էր եկել երկրորդ հարկի հատակը, շահագործման համար ոչ պիտանի էին դարձել ամբողջ գույքը և ենթակառուցվածքները: Պետական բյուջեի միջոցների հաշվին 2012 թվականին ամբողջովին վերանորոգվել է տանիքը, փոխվել են դռներն ու պատուհանները, մասնակի վերանորոգվել է շենքը, ամբողջովին վերակառուցվել է ջեռուցման համակարգը, նորացվել են էլեկտրականության, ջրի և կոյուղու համակարգերը: Շենքի մնացած մասի /1 մասնաշենքի/ վերանորոգումը, մանկապարտեզի տարածքի բարեկարգումն ու ցանկապատումը, ինչպես նաև նոր գույքի ձեռքբերումն ու կահավորումը իրականացվել է 2015-2016թ.թ.: Վերաբացվել է 2017 թվականին:

Համայնքի մշակույթի տունը, որտեղ տեղակայված է նաև գրադարանը, կառուցվել է 1984 թվականին: Մինչև օրս վերանորոգում և նոր գույքի ձեռքբերում հնարավոր չի եղել, բացառությամբ տանիքի և մուտքի դռների, որոնք փոխվել են 2008 թվականին՝ պետական բյուջեի միջոցներով: Տարիների ընթացքում նախկինում եղած գույքն էլ շարքից դուրս է եկել և ներկայումս էլ հնարավոր չէ սեփական միջոցներով թարմացնել, կամ ձեռք բերել: **Խիստ անհրաժեշտություն է մշակույթի տան**

շենքի /ներառյալ՝ գրադարանի/ հիմնանորոգումը, ցանկապատումն ու նոր գույքի ձեռքբերումը, որը կնպաստի բնակչության շրջանում կուլտուր-կենցաղային առօրյան նորմալ կազմակերպելու, ինչպես նաև տարատեսակ խմբակների ու միջոցառումների կազմակերպմանը: Ներհամայնքային ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: **Ներկայումս անհրաժեշտ է** մոտ 10 կմ ընդհանուր երկարությամբ ներհամայնքային փողոցների բարեկարգում և մասնակի ասֆալտապատում և միջոցառումային ճանապարհի փոսալցում:

Համայնքի տարածքում առկա կամուրջներից՝ գյուղի երկու թաղամասերն իրար կապող կամուրջը, կառուցվել է 1970-ական թվականներին: Կամուրջը նաև միացնում է համայնքը Սևան-Երևան մայրուղուն, որն ունի ռազմավարական և կենսական նշանակություն: Ներկայումս այդ կամուրջն համարվում է վթարային և ունի հիմնանորոգման անհրաժեշտություն:

Համայնքում կան 5 գերեզմանատուն, որոնցից 1-ը՝ փակ, 2-ը՝ մասնակի փակ և 2-ը՝ բաց: Բաց գերեզմանատները ներկայումս զբաղեցնում են մոտ 6 հա տարածք, սակայն համայնքի գլխավոր հատակագծով նախատեսվել է գերեզմանատան տարածքի ընդլայնում: Գերեզմանատների զբաղեցրած տարածքների շրջակա բնական միջավայրի վատթարացումը կանխարգելելու նպատակով **անհրաժեշտ է գերեզմանատների ցանկապատում և գոյություն ունեցող ցանկապատի վերականգնում:**

1.5. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա են 1 բազմաբնակարան բնակելի շենք /նախկին ուսուցիչների տունը, որը ՀՀ կառավարության որոշմամբ հատկացվել է բնակիչներին/՝ 8 բնակարանով, և 500-ից ավել առանձնատներ: Բազմաբնակարան բնակելի շենքի մաշվածության չափը մեծ է, վերանորոգման կարիք են զգում հիմնականում տանիքը և կոյուղին: Առանձնատները բոլորն էլ տարբեր ժամանակներում կառուցվել են բնակիչների կողմից՝ սեփական միջոցներով:

2014 թվականին Ասիական բանկի միջոցներով, «Դոմաշեն գյուղի ջրամատակարարման բարելավում» ծրագրով ամբողջովին փոխվեց խմելու ջրի ներքին ցանցը, ինչի արդյունքում գրեթե 100 %-ով համայնքում լուծվեց խմելու ջրի խնդիրը:

Տնտեսություններում կոյուղու գծերը անհատական են, ինչը շատ դեպքերում լուրջ սանիտարական խնդիրներ է առաջացնում: Ընդհանուր կոյուղագծի կառուցումն ու շահագործումը կնպաստեն նշված խնդիրների լուծմանը:

Համայնքի գազաֆիկացման հարցը նույնպես լուծված է:

Համայնքում առաջնակարգ խնդիրներից մեկն էլ արտաքին լուսավորության հարցն է: Կենտրոնական փողոցն ամբողջությամբ, եկեղեցին, ինչպես նաև մի քանի փողոցներ ապահովված են արտաքին լուսավորման համակարգով՝ ընդհանուր 6160 զմ երկարությամբ: Լուսավորման համակարգերի անխափան շահագործումն ապահովվում է համայնքի բյուջեի միջոցներից, որի հետևանքով երեկոյան և գիշերային ժամերին այդ փողոցներով երթևեկելը և՛ վարորդների, և՛ բնակիչների համար առավել անվտանգ է և ապահով: Կարիք կա համայնքի բոլոր փողոցները ապահովել լուսավորությամբ Համայնքի բոլոր փողոցների լուսավորության հարցի կարգավորումը կապահովի թաղամասերի միջև բնակչության շարժը և անվտանգությունը, իսկ գյուղը կդարձնի էլ ավելի լուսավոր և գեղատեսիլ:

1.6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում չկան կաթնամթերքի և մրգերի վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 643-Ն որոշմամբ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքին և հանդիսանում են համայնքային սեփականություն:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 4345.22 հա, որից բնակավայրի տարածքը կազմում է 204.39 հա, իսկ համայնքային սեփականության հողերը՝ 2841.02 հա: Հողերի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը՝ 572, սեփականաշնորհված հողի մեկ հողաբաժնի չափը՝ 1.24 հա, որից 0.64 հա վարելահող, այդ թվում տնամերձ և 0.60 հա խոտհարք:

Մեկ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի քանակը՝ 4:
Համայնքի հողային ֆոնդի բախշումը հետևյալն է.

	Համայնքի վարչական տարածքը, որից՝	4345.22 հա
1.	Գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում՝	3866.85 հա
	Վարելահողեր	731.53 հա
	Խոտհարք	691.22 հա
	Արոտավայրեր	1956.77 հա
	Այլ հողատեքեր	487.33 հա
2.	Բնակավայրի հողեր, որից՝	204.93 հա
	Բնակելի կառուցապատման	156.30 հա
3.	Արդյունաբերական և ընդերքօգտագործման հողեր	203.41 հա
4.	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ հողեր	37.97 հա
5.	Հատուկ պահպանվող տարածքներ	12.39 հա
6.	Անտառային հողեր	3.73 հա
7.	Ջրային հողեր	15.94 հա

Ոռոգման ջրով ապահովված է գյուղի 25-30 %-ը, որոնք ոռոգումն ապահովում են նախկին «Հրազդան» գետի հունից՝ անհատական պոմպերի միջոցով, ինչպես նաև ինքնահոս եղանակով, իսկ մնացած մասը դժվարանում է կազմակերպել գյուղատնտեսական կուլտուրաների արտադրությունը: Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի և այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է ինչպես ոռոգման ջրից, այնպես էլ բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին դեռ կարելի է որոշ չափով բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 50-80%-ը: Համայնքն ունի նաև մոտ 2.5 կմ երկարությամբ ոռոգման ջրի համակարգ, որը սկիզբ է առնում Սևան-Աթարբեկյան ջրատարից, որը միաժամանակ սպասարկում է նաև Կոտայքի մարզի Քաղսի, Վանատուր, Ջրառատ համայնքները, Զովաբեր համայնքը: Ջրատարն ընդհանուր առմամբ ունի 5 կմ երկարություն, իր հզորությամբ ոռոգման շրջանում չի կարողանում սպասարկել բոլոր համայնքները, փաստորեն, ջրի անբավարարության պատճառով համայնք ջուր չի հասնում: Նպատակահարմար է Դդմաշեն-Զովաբեր կամ Դդմաշեն-Ծաղկունք սահմանների ձորակում, սարերից իջնող ջրերը /աղբյուրների ջրեր, անձրևաջրեր, ձնհալի ջրեր և այլն/ կուտակել և օգտագործել ոռոգման նպատակով, ինչի համար պետք է կառուցվի պատվար /ջրհավաք/, որը հնարավորություն կտա ջրովի դարձնել շուրջ 300 հա տարածք /Դդմաշեն և Զովաբեր համայնքների/ Համայնքում ոռոգման նոր ջրատարի կառուցումն անհրաժեշտություն է, որի համար համայնքը չունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Սակայն դրա իրագործումը հնարավոր է ֆինանսական մեծ գումարներից, որը համայնքը ի վիճակի չէ:

2018 թվականի ընթացքում համայնքում գյուղատնտեսական ապրանքներից արտադրվել է հիմնականում 4046 g հացահատիկ, 6825 g կարտոֆիլ, 4732 g բանջարեղեն, 1008 g պտուղ և հատապտուղ, 8630 g խոտ և ծղոտ: 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա են անասնազվաքանակի հետևյալ տեսակներն ու քանակությունը - խոշոր եղջերավոր անասուններ՝ 1487 գլուխ, խոզեր՝ 795 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 2856 գլուխ, թռչուններ՝ 17747 թև և 440 մեղվաընտանիք:

Վերջին տարիներին պետության կողմից անվճար, կամ համեմատաբար ցածր գներով տրամադրվող սերմացուն, պարարտանյութը, ինչպես նաև դիզ. վառելիքը ինչ-որ չափով բարելավել է գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը, սակայն համայնքում դեռևս կան հողատարածքներ, որոնց մշակելու համար ֆինանսական միջոցներ և այլ գյուղ. տեխնիկա են պահանջվում: Հացահատիկային կուլտուրաների մշակմանը խոչընդոտ են նաև գյուղ. տեխնիկայի, մասնավորապես՝ հացահատիկահավաք կոմբայնի, մաշվածությունը և անսարքությունը: Համայնքում կան երկու հացահատիկահավաք կոմբայն, որոնք, սակայն, երկար տարիների օգտագործումից ֆիզիկապես և բարոյապես մաշված են, բերքահավաքի ժամանակ կորուստները կազմում են շուրջ 50 տոկոս: Անհրաժեշտություն է հացահատիկահավաք նոր կոմբայնի ձեռքբերումը:

2014 թվականին հիմնադրված «Դդմաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի գործունեության ընթացքում իրականացվել է հեռագնաց արոտների

ջրարբիացում, ինչպես նաև գյուղ. տեխնիկայի ձեռքբերում, որոնց շնորհիվ շուրջ 50 %-ով նվազեց գյուղատնտեսական աշխատանքներում կատարվող ծախսերը: Մի խոսքով, համայնքում որոշակի չափով լուծվել է նաև գյուղատնտեսական աշխատանքների՝ ժամանակին և պատշաճ ձևով կազմակերպան խնդիրը:

1.7. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Համայնքի վարչական տարածքով անցնող, Երեւան-Սևան ավտոմայրուղու, ինչպես նաև բնակավայրի տարածքով անցնող H-29 հանրապետական նշանակության ավտոճանապարհի եզրերի մաքրությունը ամենօրյա խնդիր է:

Բնակչության կենցաղային աղբի հեռացումը եւ համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է, սակայն անհրաժեշտ է օր-օրի որոնել եւ օգտագործել նոր տեխնոլոգիաներ բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը կատարվում է համայնքի միջոցներով՝ «Արայիկ Սահակյան» ԱԶ-ի կողմից՝ շաբաթը երկու անգամ: Չնայած դրան, մինչև համայնքում աղբահանության կազմակերպումը, համայնքի որոշ բնակիչների կողմից նախկինում աղբավայրի է վերածվել «Հրազդան» գետի հունի տարբեր հատվածներ՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ: **Անհրաժեշտություն է** դարձել գետի հունի մաքրումը, սելավատարի մաքրումը և կեղտաջրերի հեռացումը: Շրջակա միջավայրի պահպանության և սանիտարիայի վրա առավել բացասական ազդեցություն ունի նաև «Սևան-Հրազդան» կոլեկտորի վթարային վիճակը, որի հետևանքով կեղտաջրերը լցվում են «Հրազդան» գետ՝ստեղծելով հակասանիտարական և համաճարակային իրավիճակ: Նույն վտանգն սպառնում է նաև հարևան համայնքներին և Կոտայքի մարզի առանձին համայնքներին: Նկատի ունենալով, որ նշված խնդիրը ոչ միայն տեղական է, այլ նաև ընդհանուր, ուստի այդ խնդրի լուծումը հնարավոր է միայն պետական բյուջեի կամ բնապահպանական որևէ միջազգային ծրագրի միջոցներով:

Բնության և շրջակա միջավայրի պահպանության իրականացվող գործառնությունները հետևյալն են.

- ա. փողոցների սանիտարական մաքրում,
- բ. կենցաղային աղբահանություն,
- գ. գերեզմանատների տարածքների մաքրում,
- դ. թափառող կենդանիների վնասազերծում
- ե. կեղտաջրերի հեռացում:

Նախատեսվում է շարունակել այս աշխատանքների կատարումը նաև հաջորդ տարիներին, ավելացնելով աղբահանության ծավալները, մշակելով նոր մեխանիզմներ, բնակչության շրջանում աշխատանք տանել շրջակա միջավայրի մաքրության և պահպանության ապահովման գործում, բարելավել աշխատանքների կատարման որակը:

Մեր համայնքը չունի անտառածածկ գոտի, սակավ են նաև կանաչապատ տարածքները, ուստի **կարևորվում է** կանաչ գոտիների ստեղծումը: Կանաչապատման ուղղությամբ նույնպես համայնքապետարանը նախատեսում է իրականացնել որոշակի ծրագրեր, այդ թվում՝ կազմակերպել ծառատունկ համայնքի տարբեր տարածքներում:

1.8. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ

Համայնքի կապը տարածաշրջանային կենտրոն համարվող Սևան քաղաքի ու հարևան համայնքների հետ իրականացվում է «ԱԱԱ-ՏՐԱՆՍՍԵՎ» ընկերության կողմից՝ Սևան-Չովաբեր երթուղու միջոցով՝ օրական 9 երթ՝ միկրոավտոբուսով: Լինում են դեպքեր, որ նման քանակի երթերի պարագայում նույնիսկ տրանսպորտային սպասարկումը մասամբ է բավարարում բնակիչների պահանջները: Ամռան ամիսներին գործում է նաև Երևան-Շորժա երկաթուղային գնացքը, որն անցնում է համայնքի տարածքով:

Համայնքի բնակչության մոտ 90 %-ն ապահովված է հեռախոսակապով: Համայնքում գործում է ֆիքսված հեռախոսակապ՝ թվայնացված 261 կողով: Գործում են նաև «ԲիԼայն», «ՎիվաՍել» և «Յուբոն» բջջային ցանցերը, կա ինտերնետ կապ:

Բնակչությունը հնարավորություն ունի դիտելու ավելի քան 10 հեռուստաալիք:

Համայնքն ունի «Հայփոստ»-ի բաժանմունք, որը վերանորոգվել է, կահավորվել է ու նորացված տեխնիկայով սպասարկում է բնակիչներին:

2012 թվականին Համաշխարհային բանկի ծրագրով ասֆալտապատվեց Դոմաշեն-Զովաբեր-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի 5.5 կմ հատվածը, որից շուրջ 1.7 կմ համայնքի տարածքում: Սակայն շատ են նաև ճանապարհային տնտեսության հետ կապված խնդիրները: Մասնավորապես, Սևան-Զովաբեր-Հրազդան հանրապետական նշանակության H-29 ավտոճանապարհի՝ Դոմաշեն գյուղի վարչական տարածքում, ավազահանքի հարակից հատվածում ճանապարհը խիստ վտանգավոր է երթևեկության համար: Ճանապարհի հյուսիսային կողմն ունի մոտ 40 մետր խորություն /ճանապարհի երկայնքով՝ մոտ 400 մետր երկարությամբ/, իսկ հարավային կողմն ունի մոտ 80 աստիճան թեքությամբ շուրջ 150 մետր խորություն /ճանապարհի երկայնքով՝ մոտ 800 մետր երկարությամբ/: Նշված ճանապարհահատվածը երթևեկության համար խիստ վտանգավոր է հատկապես գիշերային ժամերին և ձմռանը: Հաճախակի են դարձել ճանապարհատրանսպորտային պատահարները, երբ ավտոմեքենան, խույս տալով կենդանուց, կամ ձմռանը՝ մերկասառույցի ժամանակ, վարորդները չկարողանալով կառավարել մեքենան՝ մեքենան դուրս է գալիս ճանապարհի երթևեկելի գոտուց, գլորվում ձորը, որի արդյունքում վթարը ունենում է նաև ողբերգական ավարտ /Սևանի քննչական բաժնում առկա են նյութեր վերը նշված դեպքերով/:

Համայնքի ոչ բոլոր ճանապարհներն են ասֆալտապատ և բարեկարգ: Բարեկարգման և փոսալցման կարիք ունեն նաև դաշտային ճանապարհները, որի արդյունքում գյուղատնտեսական սեզոնի ընթացքում կբարելավվի գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների երթևեկությունը: Ներհամայնքային ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է ներհամայնքային փողոցների բարեկարգում և մասնակի ասֆալտապատում և միջդաշտային ճանապարհի փոսալցում:

1.9. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում է առևտրի 9 կետեր, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Առևտրի այդ կետերը քարե շինություններ են: Համայնքում գործում է նաև դեղատուն:

Համայնքում անհրաժեշտություն է նաև արարողությունների սրահ ունենալը: Ներկայումս համայնքում կա ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող արարողությունների սրահ, որը չունի բավարար կոմունալ և սանիտարական հարմարություններ, ինչպես նաև անհրաժեշտ շենքային և գույքային պայմաններ: Հանդիսություններ, ինչպես նաև սգո արարողություններ կազմակերպելու համար բնակիչներն օգտվում են Սևան կամ Հրազդան քաղաքների տարածքներում գործող ռեստորանային համալիրների ու նմանատիպ այլ օբյեկտների ծառայություններից, ինչը շատ անգամներ առաջացնում է ավելորդ ֆինանսական և կազմակերպչական խնդիրներ ու դժվարություններ: Արարողությունների սրահի հիմնանորոգումը կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ (մոտ 50 մլն), ուստի նպատակահարմար է այն իրականացնել 2 փուլով: Առաջին փուլում նախատեսվում է տանիքի, լուսամուտների, դռների և միջնորմների քանդում, շինարարական աղբի հավաքում և տեղափոխում, առաստաղի բարձրացում, տանիքի հավաքում, լուսամուտների և դռների տեղադրում, տարածքի բարեկարգում: Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի մոտ 15 աշխատատեղ: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք 5-6 հիմնական աշխատատեղ, կթեթևանան բնակչության ֆինանսական խնդիրները, համայնքը կունենա հարմարավետ ու կահավորված արարողությունների սրահ, ինչ-որ չափով կլուծվի նաև երիտասարդների ազատ ժամանցի կազմակերպման հարցեր:

1.10. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1 միջնակարգ դպրոց, վերջին տարիներին ամբողջովին վերանորոգված, բարվոք վիճակում, ուր սովորում են 240-ից ավել աշակերտներ, ներառյալ՝ նախակրթարանի սաները: Դպրոցն ունի 42 աշխատատեղ, համալրված է մասնագետ կադրերով: Ապահովված է խմելու ջրով, ունի լոկալ կոյուղի: Դպրոցի շենքը նախատեսված է 800 աշակերտի համար, սակայն վերջին տարիների բնակչության արտագաղթի պատճառով կրճատվել է սովորողների թիվը:

Մանկապարտեզի շենքը կառուցվել է 1977 թվականին: 1996-2017թ.թ. մանկապարտեզը չի գործել՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Երկար տարիներ չշահագործելու հետևանքով ամբողջովին շարքից դուրս էր եկել շենքի տանիքը, անձրևաջրերի ներս թափանցման հետևանքով շարքից դուրս էր եկել երկրորդ հարկի հատակը, շահագործման համար ոչ պիտանի էին դարձել ամբողջ գույքը և ենթակառուցվածքները: Պետական բյուջեի միջոցների հաշվին 2012 թվականին ամբողջովին վերանորոգվել է տանիքը, փոխվել են դռներն ու պատուհանները, մասնակի վերանորոգվել է շենքը, ամբողջովին վերակառուցվել է ջեռուցման համակարգը, նորացվել են էլեկտրականության, ջրի և կոյուղու համակարգերը: Շենքի մնացած մասի /1 մասնաշենքի/ վերանորոգումը, մանկապարտեզի տարածքի բարեկարգումն ու ցանկապատումը, ինչպես նաև նոր գույքի ձեռքբերումն ու կահավորումը իրականացվել է 2015-2016թ.թ.: Վերաբացվել է 2017 թվականին, ուր գործում է երկու խումբ, հաճախում են 60-ից ավել երեխաներ: Մանկապարտեզն այժմ ունի 14 աշխատող: Մանկապարտեզի շենքը նախատեսված է 100 երեխայի համար, ապահովված է խմելու ջրով, ունի լոկալ կոյուղի: Մոնիթորինգի արդյունքում հնարավոր է 3-րդ խմբի բացում:

1.11. ՄՇԱԿՈՒՅԹ, ՀԱՆԳԻՍՏ, ԿՐՈՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակույթի տունը, որտեղ տեղակայված է նաև գրադարանը, կառուցվել է 1984 թվականին: Մինչև օրս վերանորոգում և նոր գույքի ձեռքբերում հնարավոր չի եղել, բացառությամբ տանիքի և մուտքի դռների, որոնք փոխվել են 2008 թվականին՝ պետական բյուջեի միջոցներով: Տարիների ընթացքում նախկինում եղած գույքն էլ շարքից դուրս է եկել և ներկայումս էլ հնարավոր չէ սեփական միջոցներով թարմացնել, կամ ձեռք բերել: Խիստ անհրաժեշտություն է մշակույթի տան շենքի /ներառյալ՝ գրադարանի/ հիմնանորոգումը, ցանկապատումն ու նոր գույքի ձեռքբերումը, որը կնպաստի բնակչության շրջանում կուլտուր-կենցաղային առօրյան նորմալ կազմակերպելու, ինչպես նաև տարատեսակ խմբակների ու միջոցառումների կազմակերպմանը:

Համայնքի գլխավոր հատակագծով նախատեսվել է համայնքի տարածքում հանգստի գոտիների ստեղծում: Սակայն ներկայումս համայնքի տարածքում կան վայրեր, որտեղ բնակիչները, ինչպես նաև այլ վայրերից եկող մարդիկ կազմակերպում են իրենց հանգիստը: Այդ վայրերից է գյուղից դեպի հյուսիս գտնվող «Աբ. Հովանենս» սրբավայրի հարակից տարածքը /«Ծառով ձոր»/, որտեղ տարվա տարբեր եղանակներին մարդաշատ է լինում:

Գյուղում գտնվում է 7-րդ դարում կառուցված սուրբ Թադևոս եկեղեցին: Եկեղեցին ներկայումս չի գործում: Տեղումների /ձյուն, անձրև, կարկուտ/ ինչպես նաև քամիների հետևանքով շարքից դուրս է եկել գմբեթը և տանիքը, անձրևաջրերը թափանցելով ներս, քայքայում են եկեղեցու պատերը: Ունի հիմնանորոգման և տարածքի բարեկարգման խնդիր: ***Առաջնային անհրաժեշտություն է գմբեթի, թմբուկի և տանիքի վերանորոգումը, որի ժամանակ հնարավոր է նաև պարերի մասնակի ամրակայում, ինչպես նաև ցանկապատի վերականգնումը:***

Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից: Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզահրապարակում, որը միշտ զբաղեցնում են դպրոցականները: Համայնքի գլխավոր հատակագծով ***նախատեսվել է*** սպորտային և մանկական խաղահրապարակների ստեղծում:

Մշակույթի տան հիմնանորոգման արդյունքում կլուծվի նաև երիտասարդության զբաղվածության, ինչպես նաև ժամանցի կազմակերպման խնդիրները:

1.12. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որն սպասարկում է Դդմաշեն և Զովաբեր համայնքները և ունի 3900 շահառու: Բուժամբուլատորիայի շենքը 2005 թվականին համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ վերանորոգվել է: Շենքում գործում է ջեռուցման անհատական համակարգ, որը կարևոր է շենքի պահպանման և ձմռան ամիսներին աշխատանքային բարվոք պայմաններ ունենալու տեսանկյունից: Ապահովված է նաև խմելու ջրով: Բուժամբուլատորիայում գործում է կլինիկական ախտորոշիչ լաբորատորիա, շտապ օգնության ծառայություն, իմունկանխարգելիչ և ընտանեկան բժշկի կաբինետներ: Ամբուլատորիան

ապահովված է շտապ օգնության մեքենայով, ունի 10 աշխատող, որոնցից մեկ բժիշկ՝ թերապևտ, ընտանեկան բժիշկ: Ներկայումս բուժամբուլատորիան ունի ընտանեկան բժշկի, ստոմատոլոգիական կաբինետի և ուլտրաձայնային հետազոտության սարքավորման կարիք:

1.13. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 1705 մարդ, այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 1500 մարդ, այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 205 մարդ, շուրջ 200 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի:

Նախորդ տարիների համեմատ գործազրկության և արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակը որոշակի չափով նվազել է ի շնորհիվ համայնքում «Գրին ֆարմեր» ՍՊԸ-ի կողմից հիմնվող շուրջ 30 հա պտղատու այգիների և շուրջ 100 հա /նախատեսվող/ ջերմոցային տնտեսության, ինչպես նաև «ԳԱՌ-ԶԻՆՈ» ՍՊԸ-ի կողմից ԱԳԼԾԿ-ի նոր կառուցման և ընդարձակման աշխատանքներում ներգրավվածության:

Համայնքի տարածքում գործում են 9 պարենային և ոչ պարենային խանութներ և 1 դեղատուն:

Բնակիչների եկամուտների աղբյուր են հանդիսանում նաև թոշակներն ու նպաստները, ինչպես նաև գյուղատնտեսությունից և ընտանիքի անդամի՝ արտագնա աշխատանքներից ստացված եկամուտները, ինչը, սակայն որոշ դեպքերում ոչ բավարար է նորմալ կենսամակարդակ ապահովելու համար: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը աշխատատեղերի ստեղծումն է, քանզի համայնքն ունի մեծ աշխատուժ, մտավոր և ֆիզիկական զգալի պոտենցիալ:

1.14. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Հատկապես վերջին տարիների ընթացքում նկատվել է որոշակի դրական տեղաշարժ համայնքի ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում, ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Մյուս կողմից, համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հասարակական հանրագումար աշխատանքներին, հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքի դպրոցում կամ համայնքապետարանում տարեկան 1-2 անգամ կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը (համայնքի ղեկավարը և ավագանու անդամները) և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

Համայնքի ավագանու 25.05.2016թ. N 6 որոշմաբ հաստատվել է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, համայնքն ունի համացանցային կայք, չունի տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցներ (թերթ, տեղական հեռուստատեսություն և այլն): Համայնքում մշակույթի տան բավարար պայմանների բացակայությունը մեծապես խոչընդոտում է հանրային հավաքների ու միջոցառումների կազմակերպմանը բնակիչների՝ ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.15. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2018 թվականի օգոստոսին համայնքում, համայնքի ղեկավարի որոշմամբ, ստեղծվել է աղետների դեպքում բնակչության տարահանման հանձնաժողովը, հաստատվել է բնակչության տարահանման գործողությունների պլանը:

Չնայած համայնքի ՏԻՄ-երի շահագրգռվածությանը և պատրաստակամությանը, առայժմ չկան այլ համագործակցություն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գործող մարզային համապատասխան մարմինների հետ: Դա է պատճառը, որ համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակով խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի տարածքում առկա կամուրջներից՝ գյուղի երկու թաղամասերն իրար կապող

կամուրջը, կառուցվել է 1970-ական թվականներին: Կամուրջը նաև միացնում է համայնքը Սևան-Երևան մայրուղուն, որն ունի ռազմավարական և կենսական նշանակություն: Ներկայումս այդ կամուրջն համարվում է վթարային և ունի վերանորոգման խիստ անհրաժեշտություն:

Անհրաժեշտություն է դարձել գետի հունի մաքրումը, սելավատարի մաքրումը և կեղտաջրերի հեռացումը: Շրջակա միջավայրի պահպանության և սանիտարիայի վրա առավել բացասական ազդեցություն ունի նաև «Սևան-Հրազդան» կոլեկտորի վթարային վիճակը, որի հետևանքով կեղտաջրերը լցվում են «Հրազդան» գետ՝ ստեղծելով հակասանիտարական և համաճարակային իրավիճակ: Նույն վտանգն սպառնում է նաև հարևան համայնքներին և Կոտայքի մարզի առանձին համայնքներին: Նկատի ունենալով, որ նշված խնդիրը ոչ միայն տեղական է, այլ նաև ընդհանուր, ուստի այդ խնդրի լուծումը հնարավոր է միայն պետական բյուջեի կամ բնապահպանական որևէ միջազգային ծրագրի միջոցներով:

Անհրաժեշտություն է նաև ջրահեռացման նոր համակարգերի կառուցումը, որի արդյունքում փողոցները և դրանց հարակից տները /շենք-շինությունները/ զերծ կմնան հեղեղումներից:

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող «Դմաշեն համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի և առևտրի 10 մանր կետերի գործունեությամբ: Սակայն, միևնույն է, համայնքում բիզնեսի զարգացման վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

Ամփոփելով, համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները բերված են հավելված 2-ում: Այդ ցուցանիշները երկու տեսակի են՝ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը (միջավայրը) բնութագրող (ոչ ֆինանսական) և ֆինանսական ցուցանիշները:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա, կարելի է արձանագրել համայնքում ներկայում առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները: Դրանք են՝

- մշակույթի տան հիմնանորոգման անհրաժեշտություն,
- համայնք չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի),
- համայնքը չունի աղբավայր,
- ներհամայնքային ճանապարհները և փողոցներն հիմնականում անբարեկարգ վիճակում են, չունեն արտաքին լուսավորության համակարգ, բացառությամբ՝ կենտրոնական փողոցի,
- համայնքը չունի գյուղատնտեսական հողերի ոռոգման համակարգ, որի պատճառով համայնքի գյուղատնտեսական նշանակության վարելահողերը մեծամասամբ նպատակային չեն օգտագործվում, որի հետևանքով աստիճանաբար վեր են ածվում խոպան հողերի,
- համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու հարցում, անհրաժեշտություն է համայնքում գյուղատնտեսական մթերքների ընդունման և վերամշակման ձեռնարկության, կամ կետի առկայությունը,
- համայնքի գերեզմանատների ցանկապատում,
- համայնքից տարեցտարի ավելացող արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,
- համայնքի աշխատունակ բնակչության մոտ ¼-ը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ,
- համայնքի «Աբ. Թադեոս» եկեղեցին /VII-րդ դար/, որը չի գործում, հիմնանորոգման կարիք ունի:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2019-2023թթ. ՀՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա

զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցի առկայություն և գերազանց վիճակ
2. 100 %-ով գազաֆիկացում
3. Ֆիքսված և բջջային հեռախոսակապի և ինտերնետ կապի առկայություն
4. Հարակից գյուղերի, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ կապող մայրուղու և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նորմալ /վերանորոգված, ասֆալտապատված/ վիճակ
5. Համայնքապետարանի, դպրոցի, բուժամբուլատորիայի, մանկապարտեզի, ինչես նաև «Հայփոստի» տիպային շենքերի առկայություն, շենքերի վերանորոգված վիճակ, աշխատանքային նորմալ պայմաններ, անձնակազմերի մասնագետ կադրերով ապահովվածություն
6. «Դմաշեն համայնքի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի գործունեություն, որի շրջանակում ձեռք է բերվել համայնքին անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ, ինչպես նաև ջրարբիացվում են հեռագնաց արոտավայրերը
7. Մեծ չափի արոտավայրեր, խոտհարքներ և վարելահողեր, որը հնարավորություն է տալիս զարգացնելու գյուղատնտեսությունը, հատկապես՝ անասնապահությունը
8. Համայնքն ունի մեծ թվով բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող բնակիչներ, ինչպես նաև ուսանողներ
9. Աշխատուժի առկայություն
10. Գյուղում կա 7-րդ դարի եկեղեցի, բազմաթիվ սրբավայրեր, խաչքարեր, հեթանոսական ժամանակաշրջանի արձաններ և դամբարանադաշտեր, ինչպես նաև պատմամշակութային արժեքներ ներկայացնող այլ վայրեր, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում:
11. համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապը և փոխհամաձայնեցումը.
12. համայնքի ղեկավարի փորձը և ազգաբնակչության վստահությունը:

1.18. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Ներհամայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակ,
2. Աշխատատեղերի պակաս և գործազրկության բարձր մակարդակը,
3. Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացում,
4. Կոյուղու համակարգի բացակայություն,
